

ներովը: Սեդրակ անկիւնի մէկ սրճարանին մէջ կարսօն մըն էր այլեւս: Ամէն բան գետին ձգեց ու դուրս գնաց: Անխօս: Առանց մէկու մը նայելու: Կոնակէն տեսայ որ քիչ մը նիւթար- ցած էր, ու անմաքուր հագուստ մը կը կրէր:

Բայց միւս այցելութիւններու՝ Սեդրակ կըր- ցաւ զիս բարեւել, ափսէն վար չձգեց, ինծի ժպտեցաւ իսկ, և քողաքովարութեամբ ծա- ւայութիւն ըրաւ:

Ոչ մէկ հարցում ուղղեցի իրեն: Կանոնաւոր կերպով կը ծառայէր: Հայ որբը չէր անիկա այլեւս. մարդիկն ալ հայ որբը մոռցած էին: Ժամանակը կրկին լաւագոյն կարգադրիչը հոն- գիսացաւ:

Գ.

- Տոմսակ մը, Պարոն...:

Նորէն Սեդրակը: Փողոցի մը անկիւնը: Վի- ճակահանութեան տոմսակ կը ծախէր: Եգիպտ- տոսի մէջ, ամէն անպէտ ու անգործ մարդ, փողոցներու մէջ վիճակահանութեանց տոմսակ կը ծախէ: Ճանճերու կը նմանին:

Մերժեցի: Հարցում ալ չըրի: Անուղղայ մը ըլլալու էր: Թերեւս մոլութիւն մ'ալ ունէր: Զէր բարձրանար, կ'իջնէր անիկա:

Տխրութիւն եկաւ վրաս: Ինծի համար, իրեն համար, ամբողջ հայութեան համար:

Ազգս կը պարունակէր որբերու երիտասար- դութիւն մը՝ որ պաշտպան չունէր, որ ինք- ղինքը չէր կրնար պաշտպանել: Ազգիս մէկ մասը տարիքոտ յուսախաբներ էին, միւս մասը որբեր:

Փողոց ինկած էր այն մասը որ յոյս պէտք էր ներշնչէր:

- Տոմսակ մը, մէկ տոմսակ միայն...:

Ես կրկին մերժեցի իր առաջարկը: Այս տե- սակ օգնութիւն ցաւ մըն էր: Եւ թաղանթն ազատուելէ յետոյ հայ մը կը տառապէր ամէն օր ապրելու համար: Եւ շարունակեցի ճամ- բաս, առանց պատասխանի: Թերեւս ես աւելի կը տառապէի:

Յաւը կը տեսնէի, դարմանը՝ ոչ: Ներգաղթի հրահանգէն շատ առաջ էր:

Դ.

Ամիսներ յետոյ՝ կրկին տեսայ Սեդրակը, փողոցին մէջ, միշտ ձեռքին մէջ տրցակ մը

տոմս: Իր ներկայութիւնը ինծի կը հետեւէր: Շուքի մը պէս: Հալածանքի շարունակութիւնն էր այս: Որբը ցաւի տպրումն ունի, և որբի մը անկումը՝ պատիժ մըն է ամէնուն համար:

Մօտեցաւ ինծի այս անգամ անվախ: Ու ըսաւ:

- Գիտեմ թէ ինչո՞ւ կը մերժես տոմսակ գնել:

Երեսը նայեցայ:

Անպարտ արձակուածի երեւոյթը ունէր: Այսպիսով քննադատութիւնը կար՝ իր չեշտին մէջ: Լուութեանս վրայ վերսկսաւ:

- Կը հասկնամ. չես ուզեր զիս այս վիճա- կին մէջ տեսնել... Եւ օր մը ըսիր թէ չես ալ սիրեր որ յաճախ գործ փոխեմ... բայց, Պա- րոն, փափաքը և իրողանութիւնը իրարմէ շատ տարբեր բաներ են:

Սեդրակ ինքզինքը կը պաշտպանէր: Կեցայ ճամբան. քիչ մը յոյս առի: Անիկա գեռ ըսաւ:

- Ո՛չ ուսում, ո՛չ ալ արհեստ ունիմ... այդ խանութին մէջ չէի կրնար մնալ. ապագայ չկար: Կարսօն եղայ. այս ալ չյաջողեցաւ. երբեմն չինք սուրճ կը խմեն, «չորս խմեցի» կ'ըսեն... չես կրնար հակառակիլ. անոնց կը հաւատան...: Մարդիկ շահ կը նկատեն ինծի պէս որբէ մը մէկ դահեկան կողոպտելը...: Հացի դրամ չէր մնար այս ձեռով. բայց պէտք էր ուտել, չէ՞. մարի մը կայ սինեմա չեմ գացած. ես ալ մարդ եմ, թէեւ յօթօրիաձի որբ մը... հա՛, հա՛, հա՛...: Ես ալ կ'ուզեմ քիչ մը աւելի տեսնել, հասկնալ: Իմ հասկցածս՝ մարդիկը եղան: Կարսօն մը զի- արարածները աղէկ հասկցայ. Կարսօն մը զի- րենք աղէկ կը հասկնայ: Ամէնէն առաջ՝ բարե- կամք Մըխերեանը, որուն գրասենեակը երբեմն կու գայիր. որուն մօտը զիս առաջին անգամ տեսնելուդ՝ ափսէն ձեռքէս վար ինկաւ ամ- տեսնելուդ: Ես ալ մարդը ինծի կէս դահեկանի մը նուէր թէս. այս մարդը ինծի կէս դահեկանի մը նուէր չըրաւ մինչեւ այսօր. գաւաթ մը սուրճը մէկ դահեկան է: Կը հասկնամ չիմա: Ինծի նուէր տալը հրապարակային չէ: Գիտեմ ինչ կը ծախէ Մըխերեանը՝ երբ երեւնալ կայ: Երկու ծախսէ Մըխերեանը. մեծը հաղիւ տասը տարե- պզտիկ մանչ ունի. մեծը հաղիւ տասը տարե- կան. օր մը երբ իր գրասենեակն էի՝ հագուստե- ղէնի խանութէ մը ծրարներ եկան այս մանչե- րուն համար, ու բարեկամք վճարեց, մէկ ան- դամէն, յետոն ոսկիէն աւելի: Իր զաւակներն են, թող ծախսէ. արդէն չափէն ալ աւելի ունի կ'ըսեն. բայց ես ալ որբ մեծցած եմ, հայ ես:

ՆՈՐ ՍՈՒՐ ՀԱՆԴԱԿ

«ԲԱԶՄԱՎԷՊ»-Է

ԳՐԱԿԱՆ ՀԱՐՑ

Մեր ազգային արդի մատենագրութիւնը յա- ճախ մասնագէտներու կողմէն ենթարկուած մասնակի ուսումնասիրութիւններու, ունեցած չէ ցարդ իր պատմագիրը որ ամբողջական քննութեամբ մը ներկայացնէ զայն ինամբով դասաւորուած և ուսումնասիրուած իր բոլոր մանրամասնութիւններուն մէջ:

Այս գործը անհրաժեշտ կարեւոր պոկաս մը պիտի լրացնէ անտարակոյս, և որուն լաւագոյն յաջողութեան համար հարկ կը զգանք գնել սա հարցը:

Մեր արդի գրականութիւնն յօրինողը պէտք է հիներու պէս՝ բաժնէ երկու իրարմէ անջատ հատորներու՝ արեւմտահայ ու արեւելահայ գրա- կանութիւնները: Այսինքն պէտք է որ այդ երկու հայ հատուածներու մէջ եղած գրական կեանքն ու շարժումը իրարմէ բոլորովին ան- անջատ նկատէ՝ որպէս իրարու բոլորովին ան- հաղորդ գրական շարժումներ, թէ ընդհակա- ուն ձուլէ իրարու մէջ դասաւորելով այնպէս՝ որ իրարու մօտ բերուին բանաստեղծական, վի- ղինակները, գիւրութիւն և պատեհութիւն տա- լով այսպէս նաեւ համեմատական նկատումնե- րու և ազդեցութիւններու անոնց միջեւ:

Արդեօք բաւարար պատճառ է քերականա- կան տարբերութիւնը՝ որ կայ ընդ մէջ արեւե- լահայ և արեւմտահայ բարբառներու, չնկա- տելու երկու գրականութիւնները՝ որպէս միա- ձոյլ պատմութիւնը միեւնոյն ժողովուրդի մը գրական արտագրութեանց ամբողջութեան:

Ստոյգ է թէ այդ երկու գրականութիւնները իրարու հետ բոլորովին անհաղորդ եղած են, թէ ընդհակառակն կան մատենագիրներ, թեր- թէ, որոնք փոխադարձ ազդեցութիւններու ազդակ ծառայած են: Որոնք են օգուստները երկու տեսակէտներուն, և թէ ո՞րն է լաւագոյն մերտը այս ձեռնարկին մէջ:

Կը յուսանք թէ այս կարեւոր հարցին ար- ձագանդ կու տայ հայ մամուլը, ազգային գրա- կանութեան պատմութեան վերաբերեալ խնդիր մը լուսաբանելով:

3

կարսօնին նուէրը օրէնքի կարգ անցած է... գիտեմ որ եթէ օտար ըլլայի՝ ամէն մէկ սուր- ճին առնուածն կէս դահեկան նուէր մը պիտի նետէր: Ոսկիներու մէջ կորսուած այդ մարդը կ'օգտուէր իմ հայութեան, ես կը փասէի հայու մը ծառայելէն: Կը հասկնամ...

Ու երեսս նայեցաւ: Բայց, անկասկած, պա- տասխանատուն ես չէի: Եւ Սեդրակ կանգ առաւ իսկոյն, յանցանք գործած մէկու մը նման: Ինքզինքը շտկեց ու պահ մը յետոյ վերսկսաւ:

- Ներողութիւն, Պարոն... ձեր ժամանակը շատ առի. գիտեմ ձանձրացուցի ալ. ես ար- ժանի չեմ նոյնիսկ որ ինծի մօտիկ ընէիք. երկու անգամ որբ եղողին մօտիկ չեն ըներ... որբ՝ ծնողքէն, որբ՝ բախտէն:

Այդ միջոցին իրեն ծանօթ մէկը անցաւ, վազեց անոր ետեւէն՝ տոմսակ մը ծախելու համար: Տեսայ որ, վազելու առի, Սեդրակ իր աչքերը կը սրբէր և կը պոռար:

- Գնեցէք տոմսակ մը... այսօր կը քաշուի... հազար ոսկի... փորձեցէք ձեր բախտը... փոր- ձեցէք, պարոններ, ձեր բախտը...:

ՍՏԵՓԱՆ ՇԱՀՊԱՋ

Աղիքսամգրիս

ԱՇՆԱՆ ԱՐԵՒ

Աշնան արեւն յուզուած ծովուն մէջ ինկաւ իբրեւ սառած մըրըրկահաւ, ինկաւ իբրեւ ոսկի երազ շողաքանդակ Դադաղիմ մէջ լուսապարփակ:

Աշնան արեւ սեգ լեռներու վրան մընաց Արշաւին մէջ մըթահալած. Զար ուժերու նետը դըպաւ անոր սրտին Բայց կը բուժուի վերքը կրկին:

Գընաց արեւն աշնան, կորաւ մէջն ամպերուն Դաւիթութեամբ մը բազմաբեղուն, Ու հասնումին մէջն իր թախծոտ կարծես անյոյս Դարձաւ վաղուան վառ Արշաւոյ:

ՅԱԿՈԲ ԳՈՒՅՈՒՄՅԱՆ

ԲԱԶՄԱՎԷՊ